ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՆԵՐԸ IV-VII ԴԱՐԵՐՈՒՄ

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Արագածոտնը, որ պատմականորեն կոչվել է նաև **Արագածի ոտն**, **Արագածոտան**, **Կողմն Արագածա (Կողմն Արագածո**, **Կողմն Արագածու)** և այլն, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի կամ նահանգի կենտրոնական գավառներից էր, տարածվում էր Արագած լեռան հարավային լանջերին և հնում, բացի Աշտարակի, Թալինի տարածաշրջաններից, ընդգրկել է Եղվարդի, Արմավիրի ու Վաղարշապատի տարածքների մի մասը նույնպես: Մակերեսը կազմել է 3050 քառ. կիլոմետր[1]:

Արշակունյաց հարստության ժամանակ (I–V դդ.) Արագածոտնը գերազանցապես արքունական սեփականություն էր[2], որտեղ, ինչպես և ողջ Այրարատյան նահանգում՝ Հայոց Միջնաշխարհում, բնակվելու իրավունք ունեին միայն երկրի թագավորն ու գահաժառանգը: Պատահական չէ, որ երբ հռոմեական պատանդությունից Հայաստան է վերադառնում Գնել Արշակունի իշխանազունը և հաստատվում Արագածոտնի Կուաշ (այժմ՝ Կոշ) գյուղում՝ իր կուրացած Տիրան (338-350) պապի մոտ, քսության պատճառով եղբորորդու դեմ բացասաբար տրամադրված Արշակ Բ թագավորը (345-368) նրան հանդիմանում ու սպառնում է. «Ընդէր բնակեցար յԱյրարատ և լուծեր զկարգ հայրենեաց: (Քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ և միոյ որդւոյ նորա, զոր փոխանորդ թագաւորի պահէին, և այլոց Արշակունեաց բնակել ի գաւառս Հաշտենից և Աղիովիտի և Առբերանւոյ, հանդերձ ռոճկօք և մտիւք յարքունուստ): Եւ արդ՝ ընտրելի է քեզ, կա՛մ ընդունել զմահ, կա՛մ գնալ յԱյրարատայ… »[3]:

Բայց ժամանակի ընթացքում Արշակունի թագավորները երբեմն խախտում էին սահմանված կարգը և Այրարատյան արքունական սեփականությունից՝ Արքունի ոստանից, ժառանգության իրավունքով ավատական տիրույթներ շնորհում առանձին նախարարական տների: Արագածոտնը նույնպես բացառություն չի եղել. Փավստոս Բուզանդը, նկարագրելով Հայաստան ներխուժած ավարառու մազկութների, հյուսիսային բարբարոս լեռնականների դեմ սպարապետ Վաչե Մամիկոն-

[1] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 38, 118:

[2] Տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Եր., 1986, էջ 379:

[3] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն /Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի: Աշխարհաբար թարգմ. և մեկնաբ. Ստ. Մալխասյանի/, Եր., 1981, էջ 340:

յանի հրամանատարությամբ 336 թ. հայոց զորքերի տարած փայլուն հաղթանակները, Օշականի վճռական ճակատամարտը, գրում է. «Եւ իբրև առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրս Հայոց, ապա ետ հրաման թագաւորն Հայոց Խոսրով, տալ պարգևս արանցն քաջացն՝ որ վաստակեցին նմա, և փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց մեծաց յամենայն ի մարտ ճակատուցն պատերազմաց: Եւ ետ Վաչէի զօրավարի զականս Ջանջանակին և զՋրաբաշխիս և զՑլու գլուխ, ամենայն գաւառակօքն հանդերձ, և նոյնպէս և այլոց նախարարցն մեծամեծ պարգևս»[4]: Այլ նախարարների շարքում է նաև Ամատունյաց տոհմի գլխավոր Վահան իշխանը, ով, ըստ Ստեփանոս - Տարոնեցու, մեծ քաջագործությամբ աչքի է ընկնում Օշականի ճակատամարտում՝ հաղթելով կճյա թաղիքով փաթաթված ու անպարտելի թվացող վիթխարի հսկային, «Վասն որոյ պարգևէ նմա արքայ զտեղի ճակատուն զՕշական»[5]:

Այսպիսով, տակավին IV դ. առաջին կեսին Հայոց Խոսրով Կոտակ թագավորը (330-338) արքունական ոստանի մաս կազմող Արագածոտնում տիրույթներ է շնորհում **Մամիկոնյաններին** (գավառի հյուսիսում) ու **Ամատունիներին** (Օշականը):

Ենթադրելի է, որ դրանից հետո Ամատունյաց նահապետ (պատվավոր դիրքը ս. Սահակ Ա Պարթև վեհափառի (389-439) ներկայացրած «Գահնամակ»-ում՝ հայոց նախարարական տների ավագության աստիճանակարգում՝ 15-րդ)[6] Վահանը թողել է իր տոհմական բնօրրան Արտազ գավառը Վասպուրականում ու տոհմակիցների մի մասի հետ տե-

---

[4] **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն [Բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանցի], Եր., 1987, էջ 30-32: Քանի որ Վաչե Մամիկոնյանին Արագածոտնում շնորհված տիրույթների գտնվելու վայրերն անորոշ են, ապա հարկ է կատարել որոշակի պարզաբանումներ: Արագածոտնում հայտնի են Ցլուգլուխ անունով երկու լեռներ, առաջինը՝ Օշականի հարավարևելյան կողմի բլուրն է (տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Եր., 2001, էջ 379): Գուցե այն ներկայիս Դիդի կոնդն է (Դիտակետը): Երկրորդը գտնվում է Արագածոտն գավառի հյուսիսային մասում (տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Եր., 1998, էջ 387): Հետևապես պետք է ենթադրել, որ Ցլուգլխին հարակից էին նաև Ջանջանակն ու Ջրաբաշխիքը (տե՛ս նույն տեղը, էջ 387, 416, 417): Մեր համոզմամբ՝ Վաչեի տիրույթ Ցլուգլուխը լեռնային վայրում է. Բուզանդն ասում է, որ Մամիկոնյան զորապետն այդտեղ բոլորին սրի քաշեց, հետո գնաց իջավ Այրարատյան գավառի դաշտը, իսկ թշնամիները փախան դեպի Օշական բերդի կողմը, որտեղ էլ սաստիկ մեծ պատերազմ եղավ (տե՛ս **Փավստոս Բուզանդ,** նշվ. աշխ., էջ 30-31): Բացի այդ, նույն ժամանակ Օշականի բերդը, որտեղ փաստորեն գտնվում էր առաջին Ցլուգլուխը, շնորհվում է, ինչպես ասացինք, Ամատունյաց նահապետին: Ուստի պատմիչը նկատի ունի Արագածոտնի հյուսիսում՝ Արագածից հարավ - հառնող Ցլուգլուխ լեռը, մոտակա Ջանջանակի ակունքներն ու Ջրաբաշխիքը՝ շրջակա գավառակներով հանդերձ, որոնք ենթադրաբար գտնվում են Շիրակ ու Նիգ գավառների արանքում, և որտեղից սկիզբ են առնում գետակներ:

[5] «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 68:

[6] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», Եր., 2011, էջ 24:

դափոխվել ու հաստատվել Օշականում: Արշակունյաց հարստության անկումից հետո (428 թ.) Ամատունիներն Արագածոտնում ընդլայնում են իրենց ավատական տիրույթները: Ժամանակին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հարավային ավանդատան պատի ներսի երեսից Հովի. Շահխաթունյանցն ընդօրինակել է հետևյալ արձանագրությունը. «Ես իշխան Յոհան Ամատունի, յազգէն Հայոց եդի սահման գաւառիս իմոյ յԱւշականայ հասանի մինչ բլուրն Էջմիածնի. և անտի վայր մինչ ի Քասախ գետ. հիւսիսոյ կուսէ գետն Փարպու մինչ ի Քսոսպն համակ պողոտայն և անտի վեր Կարբու դարերն (ստորոտք առապարացն): Յարևելից կուսէ ճանապարհն Եղէվարդայ. աստ մինչ ի էջմիածին…»[7]: Ղ. Ալիշանն առաջարկում է իշխանի անունը կարդալ Վահան՝ նկատի ունենալով հայոց հազարապետին, որը 440 թ. իր և համայն հայության ուսուցչապետ Մեծն ս. Մեսրոպ Մաշտոցի աճյունն ամփոփեց հայրենի Օշականում, իսկ երեք տարի անց կառուցեց կենտրոնագմբեթ եկեղեցի – դամբարանը, կամ էլ նույն անվամբ մեկ ուրիշ Ամատունի տոհմակցի, ով կատարել է այդ «յառաջ քան զՀայ թուականին գրութիւն»-ը[8]: Արձանագրությունում հստակ ընդգծվում են պատմական Արագածոտնում Ամատունիների տիրույթների սահմանները՝ Օշականից մինչև Էջմիածնի բլուրը (կոչվում է Շրեզ կամ Շրեշ, գտնվում է Վաղարշապատից արևմուտք, Օշական տանող ճանապարհի աջ կողմում)[9], այդտեղից մինչև Քասախ գետը, հյուսիսից ձգվում էին Փարպու գետակից (հոսում է Փարպի գյուղի մոտով) դեպի Քսոսպ կոչվող ամբողջական պողոտան, այսինքն՝ մայրուղին, գլխավոր ճանապարհը (Վրաստան տանող), որտեղից էլ վերև՝ Կարբիի զառիվայրի քարքարոտ ստորոտները[10]: Իսկ արևելքից դրանք տարածվում էին Եղվարդի[11] ճանապարհից մինչև Էջմիածին: Նկատելի է, որ հյուսիսում Ամատունիները սահմանակցել են Նիգի[12] **Գնթունիներին** (պատվաստիճանը

---

[7] **Յովհաննէս** եպիսկոպոս **Շահխաթունեանց**, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Ս. Էջմիածին, 2014, էջ 257: Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու այս և մյուս բոլոր արձանագրությունները XX դարասկզբի վերանորոգման ժամանակ անհետաքրքրորեն ծածկվել են սվաղի շերտով և այսօր անմատչելի են ուսումնասիրությունների համար:

[8] **Ղ. Ալիշան**, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 190:

[9] Տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, էջ 155: XIII-XIV դդ. Օշականում իշխել են ***Ավետենք***:

[10] Ի դեպ, Արագածոտնի արևելյան հատվածը՝ ներկայիս Մուղնիից մինչև Օհանավան, Ուշի և դրանցից հյուսիս-արևմուտք՝ մինչև Արքաշեն, Ամբերդ գետերն ընկած տարածքները X-XIV դդ. կազմավորել են **Ամբերդ** գավառը, որը Բագրատունիների հարստության շրջանում տնօրինել են ***Պահլավունիների*** վահրամյան պայազատները, իսկ XIII-XIV դդ. հիմնականում ***Վաչուտյանները***:

[11] Եղվարդը XIV-XV դդ. պատկանել է ***Ազիզբեկյան*** իշխանական տոհմին (տե՛ս **Գ. Յովսէփեան,** Ազիզբեկենք և նրանց շինարարական գործը, ԲՀԳԻ, գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921-1922, էջ 180):

[12] Նիգում զարգացած միջնադարի (IX-XIV դդ.) առաջին փուլում՝ Բագրատունյաց շրջան (IX-XI դդ.), Գնթունիներից հետո իշխել են ***Պահլավունիների*** տոհմի Վասակ

Սահակ Պարթևի «Գահնամակ»-ում՝ 21-րդ)[13]: Ըստ Ապարանում XX դ. սկզբին գտնված հունարեն արձանագրության, տակավին III դ.-ում Տրդատ Բ թագավորը (217-252) այդ տոհմի իշխաններին է նվիրել Զովունի գյուղը (պատմական՝ Ծառայիշեն)[14]:

Հետագայում Ամատունիները ծավալվելով անցել են Արագածոտն ու Կոտայք պատմագավառների սահմանաբաժան Հրազդան գետի կիրճը և հաստատվել նաև ներկայիս Պտղնի գյուղի կողմերում: Այստեղ Ամատունյաց նահապետ Մանուելը VI դ. վերջին – VII դ. սկզբին կառուցել է Պտղնավանքը[15]: Տեղի եկեղեցու հարավային մուտքի վերևի կամարի հորիզոնական մասի ձախ և աջ կողմերում պահպանվել են Մանուել Ամատունու և նրա որդի Սահակի պատկերաքանդակները, հայրը՝ քառատրոփ սլացող նժույգ հեծած՝ գազանի նետահարելիս, տղան՝ առյուծի հետ նիզակով մենամարտելիս[16]:

Արագածոտն գավառի արևմտյան մասերում, մասնավորապես Մաստարայի կողմերում, IV դարակեսից տեսնում ենք **Գնունիներին**: Փաստը վիմագրագիտական ատաղձով բացահայտվում է VII դ. կեսով. Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցու հարավային խաչաթևի պատուհանի վերևում արձանագրված է. ՅԱՄՍ ՏՆ ԹԵՈԴՈՐՈՍԻ/ ԳԸՆՈՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ/ ՇԻՆԵՑԱՒ (իմա՝ վերաշինեցաւ) ԱՕ[ԱԻ]Ն ՏՈՒՆՍ…[17]: Այս Թեոդորոս Գնունյաց եպիսկոպոսի անունը նշվում է Դվինի 645 թ. IV եկեղեցական ժողովին մասնակից բարձրաստիճան հոգևորականների շարքում[18]: Իսկ վերոհիշյալ վիմագիր հիշատակությունը հուշում է, որ տարածքի ավատատերերը Գնունյաց նախարարական տան պայազատներն էին. հնում չէր կարող որևէ տիրույթի աշխարհիկ տերը լինել մի գլխավոր իշխանական տոհմի ներկայացուցիչ, իսկ հոգևորը՝ ուրիշ: Հիրավի զարմանք են հարուցում Մաստարայում Գնունիների անհերքելի գոյությունն ու գործունեությունը, այն էլ բեղուն, մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ տարածաշրջանում տոն տվողները, ինչը փաստում են մատենագրական ու վիմագրական բազմաթիվ սկզբնաղբյուրների անվիճարկելի վկայությունները, Շիրակի ու Արշարունիքի տեր Կամսարականներն էին, որոնք իշխում էին

Հոլումի ճյուղի ներկայացուցիչները, իսկ երկրորդում՝ Զաքարյան շրջանում (XIII-XIV դդ.)՝ ***Վաչուտյանները***:

[13] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», էջ 25:

[14] Տե՛ս **Ա. Հասրաթյան,** Արուճի վաղքրիստոնեական համալիրը, Եր., 2010, էջ 87:

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 97:

[16] Տե՛ս **Բ. Առաքելյան,** Հայկական պատկերաքանդակը IV-VII դարերում, Եր., 1949, էջ 67-68, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 868:

[17] **Ալ. Մանուչարյան**, Քննություն Հայաստանի IX-XI դարերի շինարարական վկայագրերի, Եր., 1977, էջ 53: Մաստարան եղել է Գնունիների արագածոտնյան նստավայրը: ***Բագրատունյաց*** թագավորության շրջանում (874/885-1045) այն պատկանել է ***հայոց արքաներին***, մինչև որ X դ. սկզբներին Գագիկ Ա Շահանշահը (990-1020) գյուղը նվիրաբերել է ***Վահրամ Պահլավունի*** սպարապետին (998-1045):

[18] Տե՛ս «Կանոնագիրք հայոց», Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Եր., 1964, էջ 214:

նաև Թալինում: Ինչ վերաբերում է սահակյան «Գահնամակ»-ում 17-րդ պատվավոր դիրքը զբաղեցնող ու արքունական տակառապետի (գլխավոր մատռվակի) պաշտոնը վարող Գնունիների բուն տիրույթներին, ապա հայտնի է, որ դրանք ի սկզբանե գտնվել են Վանա լճի հյուսիսային առափնյա շրջաններում և ընդգրկել են Տուրուբերան նահանգի Աղիովիտ, Վասպուրական աշխարհի Առբերանի, Արճիշակովիտ գավառներն իրենց Արճեշ, Ամյուկ անառիկ ամրոցներով[19]: Բայց Ղ. Ինճիճյանը X դ. մատենագիր Մեսրոպ Երեց Վայոցձորեցու մի հիշատակությամբ պարզել է, որ այդ իշխանատոհմը կալվածքներ է ունեցել նաև Շիրակ գավառում, որտեղ Պարգև Գնունի անունով մի մեծ նախարար ճգնության է առանձնացել լեռներում[20]: Հ. Ոսկյանի համոզմամբ, չի բացառվում, որ «… եւ քաղաքական եւ ուրիշ պարագաների ճնշումով Գնունի մը կամ Գնունեաց ճիւղ մը Շիրակ հաստատուած ըլայ…»[21], իսկ Ալ. Մանուչարյանի տեսակետով՝«Գնունիների տարածվելը դեպի հյուսիս հավանաբար տեղի է ունեցել տոհմի աճի և մասնատման հետևանքով: Այս կարծիքը հաստատվում է այն փաստով, որ տոհմի մի մասը, այնուհանդերձ, չէր լքել իր ժառանգական տիրույթները: VIII դարի վերջերին նրանց նորից ենք գտնում Աղիովիտ գավառում, սակայն լրիվ անզորացած. Աշոտ Մսակերի օգնությամբ նրանք տեղափոխվում են Տայք»[22]:

Գնունիների մի ճյուղի տեղաշարժը դեպի հյուսիս և հաստատվելն Արագածոտն գավառի շիրակամերձ Մաստարա բնակավայրում եղել են նախքան Հայաստանի չարաբաստիկ առաջին բաժանումը՝ 387 թվականը. վերոհիշյալ ճգնակյաց Պարգևը Ներսես Ա Մեծ կաթողիկոսի (353-373) ժամանակակիցն է: Մեսրոպ Երեցը հիշատակում է այդ շրջանի ևս մի տոհմակից նախարարի՝ «զիշխանն Գնունեաց Մանէճ»[23], ով 353 թ. Կեսարիա հայրապետական ձեռնադրության մեկնող Ներսես Պարթևին ուղեկցող մեծամեծներից էր:

Մեր կարծիքով՝ Գնունիներն Արագածոտնում հաստատվել են այն բանից հետո, երբ Արշակ Բ թագավորը նրանց է վստահել արքունական առանցքային գործակալություններից մեկի՝ հազարապետության բարձր պաշտոնի գլխավորումը. «Եվ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն աշխարհատեսն խնամակալութեանն, շինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին»[24]: Արքայի ընտրությունը պատահական չէր. Արշակունիներն ու Գնունիները միմյանց

---

[19] Տե՛ս **Հ. Ոսկեան,** Գնունեաց եւ Ռշտունեաց նախարարութիւնները, Վիեննա, 1952, էջ 8:

[20] Տե՛ս **Ղ. Ինճիճեան**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. 2-րդ, Վենետիկ, 1835, էջ 153-154:

[21] Նույն տեղում:

[22] **Ալ. Մանուչարյան**, նշվ. աշխ., էջ 56:

[23] **Մեսրոբ Երէց**, Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց հայրապետի (Սոփերք Հայկականք, հ. 6), Վենետիկ, 1853, էջ 25:

[24] **Փաւստոս Բուզանդ**, նշվ. աշխ., էջ 106:

ճանաչում էին հրաշալի, քանի որ հարևանությամբ ապրում էին Աղիովիտ, Առբերանի գավառներում:

387 թ. բաժանումից հետո Արշակ Գ Արշակունի (378-389) թագավորի հետ մեր երկծվենված հայրենիքի բյուզանդական մաս հեռացան հայոց հազարապետի[25] գործակալությունը վարող Գնունի իշխանատոհմի ոչ բոլոր ներկայացուցիչները: Գնունիների մի հատվածը մնաց Արևելյան Հայաստանում: Դրանց թվում էին նաև Մաստարայի նրանց ազգակիցները, որոնց բարեպաշտ սերունդներն էլ 479 թ. կառուցեցին տեղի Ս. Հովհաննես հրաշազան եկեղեցին: Ցավոք, պատմությունը լռության է մատնել այդ հրաշակերտ հուշարձանը հիմնարկող իշխանազունի անունը: Բարեբախտաբար, Ղազար Փարպեցի պատմիչը հայտնում է ճիշտ նույն ժամանակի Գնունիների անուններ, երբ քաջազուն Վահան Մամիկոնյանի զինակիցների շարքում հիշատակում է իշխան Ատոմին ու նրա եղբայր Առաստոմին, որոնք Ակոռիի 482 թ. հաղթական ճակատամարտում որպես զորապետներ գլխավորել են հայոց ուխտապահ զորքի աջակողմը[26]: Հատկանշական է, որ Վահանանց շարժման ընթացքում Ատոմ ու Առաստոմ Գնունիների մարտակից ընկերների մեջ են Շիրակի տեր Ներսեհ Կամսարականը, նրա եղբայրներ Հրահատն ու Վահանը[27]:

Վահանանց պատերազմի հաղթական ավարտից ավելի քան երկու տասնամյակ անց մասնավորապես Դվինի 506 թ. I եկեղեցական ժողովին մասնակցել են «Գնէլ Գնունեաց տէր» և «Պաւղոս Գնունեաց եպս.» պատվիրակները[28]:

Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցու արևելյան արտաքին պատին՝ պատուհանի պսակի վերևում՝ կամարաձև զարդաքանդակի մեջ, փորագրված է՝ ԳՆՈ[ԻՆԻ] / ԱՆԱՍՏԱՍ[29] : Գիրը VII դարի է և կարող է վերաբերել տեղի՝ Տեր Թեոդորոս Գնունյաց եպիսկոպոսի օրերի աշխարհիկ իշխանավորին: Ժամանակը Գնունյաց նախարարական տան

---

[25] Արշակ Գ-ի հետ հայոց հազարապետ Գնունի նախարարի բյուզանդական մաս հեռանալուց հետո Խոսրով Դ-ն (384-389) Արևելյան Հայաստանում հազարապետության պաշտոնը տալիս է Ամատունիներին: «Հայաստանի բաժանման հետևանքով շատ նախարարներ Արշակ Գ-ի հետ հեռացել էին երկրի արևմտյան մասը և այժմ տեսնելով, որ Խոսրովի բաժնում մնացած իրենց կալվածքները հարքունիս են գրավվում, սկսում են վերադառնալ» («Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. II, Եր., 1984, էջ 114, **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 1-ին, Եր., 1966, էջ 497): Խոսքը Գնունիներին չի վերաբերում, քանի որ նրանց ներկայացուցչին VII դ. առաջին կեսին տեսնում ենք բյուզանդական Հայաստանի ամենաբարձր՝ հայոց իշխանի պաշտոնում: Հետևապես բյուզանդական Հայաստան տեղափոխված Գնունիների հատվածը մնացել է այնտեղ՝ հիմնականում պահպանելով իր դիրքերը:

[26] Տե՛ս **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն: Թուղթ Վահան Մամիկոնյանին (քնն. բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի: Աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Բ. Ուլուբաբյանի), Եր., 1982, էջ 300-301:

[27] Տե՛ս նույն տեղը, էջ 296-297, 300-301, 314-315:

[28] Տե՛ս **Հ. Անասյան,** Հայկական մատենագիտություն, հ. Բ, Եր., 1976, ս. 246-247:

[29] Տե՛ս **Ալ. Մանուչարյան**, նշվ. աշխ., էջ 56:

համար բավականին նպաստավոր էր. բյուզանդական մասի Հայաստանի կառավարիչն էր հայոց իշխանը՝ այդ տոհմի ներկայացուցիչ Մժեժը (629- 635)՝ Խաչափայտի ազատարար Հերակլ կայսրի (610-641) նիզակակից բարեկամը:

VII դարի կեսին ոչ միայն Արագածոտնում, այլև ամբողջ Հայաստանում կենտրոնական դիրք են զբաղեցնում **Մամիկոնյանները** (պատվաստիճանը սահակյան «Գահնամակ»-ում՝ 4-րդը)[30]: Արուճ ավանում հաստատված հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը (661-685) իր բարեպաշտ տիկին Հեղինեի հետ, ով «յԱղուանից նահանգէն էր»[31] և Աղվանից իշխան Ջևանշերի քույրը[32], 662 թ. մարտի 25-ին սկսում է Ս. Գրիգոր փառահեղ տաճարի կառուցումն ու 666-ին ավարտում այն[33]: Անշուշտ, եկեղեցու վեմ սեղանի հիմքում հայոց իշխանը տեղադրել է մի նշխար ս. Գրիգոր Լուսավորչի այն մասունքներից, որոնք ինքը «Բյուզանդիայի սահմանամերձ Դարանաղյաց գավառից Վաղարշապատ է փոխադրել…: Դա երկրում ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր ու կրոնական կենտրոնաձիգ իրավիճակ ստեղծելու միտումով արված ձեռնարկում էր»[34]: Արուճ իշխանանիստ դաստակերտում չքնաղագեղ տաճարի կառուցումից հետո հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը եկեղեցու՝ «ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիս իւր»[35], որտեղից կառավարում էր «Մեծ Հայքի հիմնական նահանգները՝ Այրարատ, Սյունիք, Արցախ, Վասպուրական, Մոկք, Տուրուբերան, Տայք և Գուգարքի Տաշիր գավառը, ինչպես նաև Աղձնիք ու Կորճայք նահանգների լեռնային մասերը»[36]: Այսօր Արուճ գյուղի Ս. Գրիգոր եկեղեցու հարավային կողմում երևում են հայոց իշխանի կառուցած արքունական պալատի ավերակները: Դրանց արևելյան մասում գտնվում է IV դ. բազիլիկ եռանավ խոնարհ եկեղեցին: Կ. Մաթևոսյանը ճիշտ նկատել է. «Մինչև կավարտվեր տաճարի շինարարությունը, իշխանն հավանաբար առաջիկա տարիների օգտագործման համար նորոգել է տվել հին բազիլիկը»[37]: Ահա այս բազիլիկ եկեղեցու հյուսիսային ավանդատան ներսում՝ սալահատակից պոկված սալաքարից ներքև, երևում է հոգածությամբ ձևավորված դամբարան: Մեր կարծիքով՝ դա կարող է լինել միայն ու միայն հայոց

---

[30] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», էջ 25:

[31] **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի (Քնն. բնագիրը և ներած. Վ. Առաքելյանի), Եր., 1983, էջ 236:

[32] Տե՛ս «Հաւաքումն պատմության Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 67:

[33] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Արուճ, Եր., 1987, էջ 37, 59:

[34] Նույն տեղում, էջ 25:

[35] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 91:

[36] «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, էջ 316: Ինչ վերաբերում է Մամիկոնյանների բուն տիրույթներին, ապա, Տայք նահանգից, Տարոն գավառից բացի, դեռևս «V դարում նրանք ձեռք էին բերել Լուսավորչի տան կալվածքները, ինչպես նաև Աղբիանոսի տան և Մանդակունիների հողերը: VII դ. նրանք արդեն Այրարատի Արագածոտն գավառում ևս իշխում էին» (նույն տեղում, էջ 321):

[37] **Կ. Մաթևոսյան**, նշվ. աշխ., էջ 70:

իշխան Գրիգոր Մամիկոնյանի տապանատունը, ով, ինչպես հայտնի է, հերոսաբար զոհվել է 685 թ. օգոստոսի 16-ին՝ Հայաստան ներխուժած ավարառու խազարական ցեղերի դեմ արյունալի ճակատամարտերից մեկում[38]:

Մամիկոնյանները, ինչպես նշել ենք, տակավին IV դարի 30-ականների վերջերից տիրույթներ էին ստացել Արագածոտն գավառի հյուսիսային կողմերում: Չի բացառված, որ նրանք Արշակունյաց հարստության անկումից հետո (428 թ.) տարածեին իրենց ավատական կալվածներն արագածոտնյան թագավորական ոստանում, իջնեին հարավ՝ դեպի գավառի կենտրոնական մասերը, որտեղով տարանցում էր միջազգային առևտրական ճանապարհը, և հաստատվեին Արուճ-Աղցք հատվածում: Ուշագրավ է փաստը, որ Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսին (613-628) մինչև հայրապետական աթոռ բարձրանալը Սեբեոսը մի դեպքում կոչում է «Կումիտաս Տարոնոյ եպիսկոպոսն»[39], մի այլ առիթով՝ «Կումիտաս Մամիկոնէից եպիսկոպոս»[40]: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Մամիկոնյանների բնօրրան Տարոնում թեմակալող հոգևորականը պետք է կոչվեր նաև տեղում իշխող տոհմի անունով: Բայց մյուս կողմից էլ, ինչի վրա բևեռեց մեր ուշադրությունն Ա. Սահակյանը, Մամիկոնյանները Տարոնի եպիսկոպոսական աթոռին կնախընտրեին տեսնել իրենց տոհմակից արժանավոր հոգևորականի: Հետևապես՝ Կոմիտաս Ա Աղցեցին Մամիկոնյան տոհմի արագածոտնյան ճյուղի ներկայացուցիչ է[41]: Բնականաբար, Մամիկոնյան էր նաև Թեոդորոս Քռթենավոր ուսուցչապետը՝ Ավան գյուղի տարածքում Արագածոտնի Ս. Աստվածածին նշանավոր դպրավանքի[42] հիմնադիրը, ում Ստեփանոս Օրբելյանը համարում է Կոմիտաս Ա Աղցեցու եղբորորդին[43]:

Մամիկոնյանները, ամրապնդվելով Արագածոտնի կենտրոնական, բանուկ հատվածում՝ Արուճ նստավայրով[44], ծավալվում են դեպի այդ պատմագավառի արևելք, որտեղ Եղվարդի մոտ Գրիգոր Մամիկոնյանը VII դ. 70-ական թվականներին կառուցում է Ս. Զորավար եկեղեցին[45]: Մամիկոնյանները տիրույթներ ունեին նաև հարևան Կոտայ-

---

[38] Տե՛ս նույն տեղը, էջ 23:

[39] «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 112:

[40] Նույն տեղում, էջ 150:

[41] Գեղծ կամ ներսիսյան «Գահնամակ»-ում 61-րդ դիրքում հիշատակվում են **Արագածեանք** (տե՛ս **Մեսրոբ Երէց**, նշվ. աշխ., էջ 34): Չի բացառվում սրանց ընձյուղվելը Մամիկոնյաններից:

[42] Արագածոտնի վաղմիջնադարյան այդ նշանավոր կրթարանը նախկինում անհիմն կերպով տեղադրել են Հառիճավանքում (տե՛ս **Ա. Մանուչարյան**, Արագածոտնի Ս. Աստվածածին դպրավանքի տեղադրությունը, «Բանբեր Երևանի համալսարանիե, «Հայագիտություն», 2016, № 1, էջ 38-45):

[43] Տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի», Թիֆլիս, 1910, էջ 115:

[44] Բագրատունյաց օրոք Արուճը տնօրինել են հայոց արքաները, իսկ հետո՝ ***Զաքարյանները***:

[45] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, նշվ. աշխ., էջ 51:

քում, որտեղ հայոց իշխանը Ձագ գյուղը նվիրաբերում է իր սան ս. Դավիթ Դվնեցուն[46]:

Գրիգոր Մամիկոնյանից քիչ հետո հայոց ներքաղաքական կյանքում վեր են բարձրանում **Կամսարականները** (տեղը սահակյան «Գահնամակ»-ում՝ 12-րդ)[47]: Վերջիններս «դեռ Արշակունիների օրոք իշխում էին Շիրակ և Արշարունիք գավառներում: VI-VII դդ. Կամսարականները ձեռք բերեցին Աբեղյանք, Գաբեղյանք, Բասեն, Հավնունիք, Վանանդ և Աշոցք գավառները՝ նստավայր ունենալով Մարմետը (Երվանդաշատ), ապա տարածվեցին նաև Արագածոտն, որտեղ նրանց էր պատկանում Թալինը»[48]: Կամսարականների բարձրացումը, ինչպես հայտնի է, պայմանավորված էր Բյուզանդիայի կայսր Հուստինիանոս Բ Ռինոտմետոսի (685-695, 705-711) 689 թ. Հայաստան արշավանքով, որը, օգտվելով Արաբական խալիֆայության ներսում անկայուն իրավիճակից, մեծ բանակով «եկն ի կողմն մի Հայոց, ի լեառն որ կոչի Արարտակ[49], և յերիս բաժանեալ զզորս իւր՝ առաքէ ի Հայս, ի Վիրս և յԱղուանս. և կոչեալ առ ինքն զամենայն իշխանս աշխարհացս այսոցիք. և ոչ ի կամաց, այլ ի հարկէ գնացեալ առ նա: Իսկ նորա զոմանս յիշխանացն ընդ իւր առեալ, և զոմանց զորդինս պատանդ խնդրեալ, ընդ որս և զկաթողիկոսն զՍահակ[50] հանդերձ Ե եպիսկոպոսօք արգելեալ առ ինքն, և զոմանս յիշխանացն արքունատուր պատարագոք պատուեալ՝ կացոյց իշխանս աշխարհացն, զՆերսէհ Շիրակայ տէր, կոմս Կապոյտիրոց՝ Հայոց իշխան…»[51]:

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի հավաստմամբ՝ «Ներսէհ Կամսարական եկաց իշխան Հայոց ամս դ»[52], այսինքն՝ 689-693 թթ.: Իր իշխանապետության այդ կարճատև ընթացքում «ԱՊՈՀ⌊Ի⌋ ԻՊԱՏ ՊԱՏՐԻԿ[53] ՇԻՐԱԿԱՅ ԵՒ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՅ ՏԷՐ», հայոց իշխան Ներսեհ Կամսարականը կառուցում է Թալինի փոքր եկեղեցին. «ՅԱՆՈՒՆ ՍՐԲ ⌈Ո⌉Յ ԱՕԱԾՆԻՆ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ԻՆՁ ԵՒ ՇՈՒՇԱՆԱՅ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ ԵՒ ՀՐԱՀԱՏԱՅ ՈՐԴՒՈՅ ՄԵՐՈՅ»[54]:

Տիկնոջ կապակցությամբ Ս. Կոզյանը գրում է. «Շուշան անունը կը թելադրէ ինձ մակաբերել, որ նաեւ Ներսեհ Կամսարական, շինող Թա-

---

[46] Տե՛ս նույն տեղը, էջ 26:

[47] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», էջ 24:

[48] «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, էջ 321:

[49] Արարտակ լեռան ճշգրիտ տեղադրությունն անորոշ է: Ոմանք ենթադրաբար տեղադրում են Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բասեն գավառում (տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 398-399):

[50] Սահակ Գ Ձորոփորեցի կաթողիկոս Հայոց Մեծաց (677-703):

[51] **Ստեփանոս Տարոնեցի**, նշվ. աշխ., էջ 100-101:

[52] Նույն տեղում, էջ 101:

[53] Հայոց իշխանը կրել է «պատրիկ» ու «կուրապաղատ» տիտղոսները (տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայոց իշխան տիտղոսի ծագումը և հայոց տերությունը VII դարում, «Բանբեր երևանի համալսարանի», 1969, № 1, էջ 243:

[54] **И. Орбели,** Избранные труды, Ер., 1963, էջ 434:

լինի, Մամիկոնեան կին առած ըլլայ … Խնամիական այս երկարատեւ աղերսը հասկանալի կընէ, որ երկու տոհմերը հոգատար ըլլային փոխադարձաբար իրարու պահպանման ու յառաջացման»[55]:

Հանձին բարեպաշտ Շուշանին՝ Ա. Տեր-Ղևոնդյանը ենթադրում է այն Կամսարական իշխանուհուն[56], ով Վարդանակերտի 703 թ. հաղթական ճակատամարտից հետո, ըստ Ղևոնդ պատմիչի, բարեգթաբար փրկեց հայոց իշխան Սմբատ Բյուրատյան Բագրատունուց (693-701 և 703-726) հետապնդվող հոգնած, հյուծված, վիրավոր 300 արաբ զորականների կյանքը[57]:

Պետք է ենթադրել, որ Ներսեհ Կամսարականը Թալինը հռչակել է հայոց իշխանի նստավայր, երբ նշանակվել է Հայաստանի իշխանապետ: Միջնաշխարհի կենտրոնում և միջազգային առևտրական բանուկ ճանապարհի վրա գտնվելու հանգամանքները բնակավայրին ամբողջությամբ հնարավորություն էին ընձեռում ստանձնելու երկրում գլխավորի ու առաջատարի գործառույթները: Այդ բնակավայրի զարդը համարվում էր նորակառույց Ս. Կաթողիկե անզուգական եկեղեցին՝ ճարտարապետական ձևերի ուրույն վայելչությամբ, շքեղությամբ: Այն որպես պաշտամունքային կենտրոն լիովին հարիր էր երկրի գլխավոր քաղաքի կարգավիճակին: Ուսումնասիրողները, ինչպես նշում է վիմագրագետ-արվեստաբան Ալ. Մանուչարյանը, հուշարձանը թվագրում են VII դ. երկրորդ կեսով և ավելացնում, որ իրենց տրամադրության տակ չունենալով գրավոր որևէ վկայագիր՝ թվագրման համար հիմք ընդունում են ճարտարապետական ձևերը և հարդարանքի տարրերը[58], որոնք կրում են Զվարթնոցի տաճարի ազդեցությունը[59]:

Թալինի[60] Ս. Կաթողիկե եկեղեցու հյուսիսային մասում տարիներ առաջ բացվեց բավական լավ պահպանված, խնամքով կառուցված ստորգետնյա դամբարանային շինություն, որի վերևում նշմարվում է ժամանակին եղած մատուռի պատերի ստորին շարքը: Դամբարանը, չնայած գրավոր հիշատակության բացակայությանը, ենթադրելի է, որ պատկանել է տեղական երևելի իշխանավորի, առավել հավանական է՝ հայոց իշխան Ներսեհ Կամսարականին ու նրա տիկնոջը՝ Շուշան իշխանուհուն:

Ըստ Ալ. Մանուչարյանի՝ ներկայիս Աշնակում ու դեպի Թալին ըն-

---

[55] **Ս. Կոզեան,** Կամսարականները «Տեարք Շիրակայ եւ Արշարունեաց», Վիեննա, 1926, էջ 66-67:

[56] Տե՛ս **Ղևոնդ,** Պատմություն (Աշխարհաբար թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի), Եր., 1982, էջ 145:

[57] Տե՛ս «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 25-26:

[58] Տե՛ս **Ալ. Մանուչարյան**, Թալինի Կաթողիկե եկեղեցին, «Էջմիածին», 1988, Ը, էջ 41:

[59] Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 375:

[60] Զարգացած միջնադարում Թալին քաղաքը, Քաղենին (ներկայիս Դաշտադեմը) և հարակից տարածքները պատկանել են ***Բագրատունիներին,*** ապա՝ ***Պահլավունիներին,*** հետո էլ՝ ***Զաքարյաններին:***

կած տարածքներում իշխում էին **Առավեղյանները**[61], որոնք սահակյան «Գահնամակ»-ում զբաղեցնում են 39-րդ տեղը[62]:

Այսպիսով, քննության առնելով Արագածոտնի նախարարական տները վաղ միջնադարում՝ տեսնում ենք, որ Հայաստանի սիրտը համարվող Այրարատի կենտրոնական այդ գավառը, որտեղ հայ ժողովուրդն ավելի վաղ երկու մայրաքաղաք էր կառուցել՝ Արմավիր (Ք. ա. IV - Ք. ա. II դդ.), Վաղարշապատ (II- IV դդ.), ու հայրապետական աթոռ հաստատել՝ Ս. Էջմիածին (301-484), չի կորցրել իր հրատապությունը IV-VII դարերում: Արշակունիների հարստության օրոք (52/66-428) և մի որոշ ժամանակ հետո էլ այդտեղ է գտնվել հայոց հազարապետի նստավայրը (Մաստարա՝ Գնունիներ, Օշական՝ Ամատունիներ), իսկ VII դ. արաբական արշավանքների ու ազդեցության շրջանում եղել է Հայաստանի իշխանապետի արքունի իշխանանիստը (Արուճ, Թալին): Արագածոտնում հիմնավորված նախարարական տները (Մամիկոնյաններ, Ամատունիներ, Գնունիներ, Կամսարականներ, Առավեղյաններ) IV-VII դդ. ոչ միայն կարևորագույն դերակատարություն են ունեցել երկրի ներքաղաքական կյանքում, արտաքին հարաբերություններում, այլև ստեղծել են մշակութային մնայուն, հզոր արժեքներ, որոնք այսօր աշխարհին են ներկայանում ուրույն ճարտարապետական լուծումներով իրականացված եկեղեցիների և այլ կառույցների տեսքով:

Բանալի բառեր – *նախարարական տներ, Արագածոտնի գավառ, Ս. Զորավոր եկեղեցի, Մամիկոնյաններ, Ս. Կաթողիկե եկեղեցի*

АШОТ МАНУЧАРЯН – *Крупные княжеские дома Арагацотна в IV–VII вв.* – Арагацотн был центральной провинцией Айраратского края. В период правления династии Аршакидов (52/66–428) Арагацотн, как и весь Айрарат, являл собой владения армянских царей, и жить там имели право только царь и наследник. Но этот порядок нарушили сами Аршакиды. В частности, в первой половине IV в. они дарили там владения крупным княжеским родам (Мамиконянам и Аматуни) за оказанные услуги. Позднее (с середины IV в.) в Арагацотне появились наделы других крупных феодалов. Во время арабских нашествий там обосновался верховный князь Армении: в 661–685 гг. Григор Мамиконян в с. Аруч, а позднее – Нерсех Камсаракан в с. Талин. Крупные княжеские дома Арагацотна не только играли важнейшие роли в политической жизни, но и создавали памятники культуры, прежде всего церкви и другие сооружения.

Ключевые слова: *княжеские дома, провинция Арагацотн, церковь св. Сил, Мамиконяны, церковь св. Католике*

ASHOT MANUCHARYAN – *The Princely Homes in Aragatsotn in IV-VII cc.* – Aragatsotn was the central region in Ayrarat province. During the Arshakuni period (52/66-428) the Aragatsotn, as well as the other regions in Ayrarat province were con-

[61] Տե՛ս **Ալ. Մանուչարյան**, Քննություն Հայաստանի IX-XI դարերի շինարարական վկայագրերի, էջ 56:

[62] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», էջ 25:

sidered to be the possessions of the Armenian Kings and only the King and the Prince had the right to live in the territories. But that tradition was broken by the Arshakunis themselves and in the first half of the IV c. they started to donate possessions to the princely homes, such as **the Mamikonyans** and **the Amatunies**, for their military services. Later, in the middle of the IV c. **the Gnuni** princely dynasty got established in Mastara. Later the Amatunies got established in Oshakan. During the of Arab invasions and reign in the middle of the VII c. the Big Prince **Grigor Mamikonyan** (661-685) got established in the village of Arutch. Then **Nerseh Kamsarakan** (689-693) got established in Talin, Aragatsotn.

The princely families played an important role not only in the inner and outer policy of the country, but also managed to create cultural values that we have possessed in the form of churches and other structures.

Key words: *Princely Homes, Aragatsotn Province, St. Zoravor Church, the Mamikonyans, St. Katoghike Church*